

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Երեվանի Պետական Չամալսարանի ֆիզիկայի ֆակուլտետի խորհրդի
13.04.2011թ. կայացած թիվ 7.10-11 նիստի
Նիստին ներկա էին խորհրդի 40 անդամներից 30 -ը:

Հաստատվեց նիստի օրակարգը`

1. Բազային լաբորատորիաների 2012 թ. հայտերի երաշխավորում
2. Ընթացիկ հարցեր

Ֆակուլտետի դեկան պրոֆեսոր Ռ. Ավագյանը շնորհավորեց պրն Կոլյա Ավետյանին ծննդյան 80 ամյակի կապակցությամբ և այդ առիթով նրան հանձնեց ԵՊՀ պատվոգիր:

Ելույթեր ունեցան պարոնայք Է. Զուբարյանը, Ա. Կիրակոսյանը և այլք` ներկայացնելով Կ. Ավետյանին` որպես լավագույն մասնագետ ռետզենյան հետազոտությունների բնագավառում, նշելով նրա մեծ ծավալի աշխատանքի ամբիոնի ուսանողների հետ:

Պարոն Ավետիսյանը իր շնորհակալական խոսքում, երախտագիտությամբ հիշեց իր համալսարանական ուսուցիչներին:

Օրակարգի առաջին հարցի կապակցությամբ ելույթեր ունեցան համապատասխան ամբիոնների վարիչները և նեկայացրեցին բազային ֆինանսավորմամբ լաբորատորիաներում կատարվող աշխատանքների ընթացքը: Պրոֆեսոր Դ. Սեդրակյանը խնդրեց հետազայում նշել նաև ֆինանսավորման ծավալը:

Որոշեցին - Երաշխավորել ներկայացված ծրագրերի հետագա ֆինանսավորումը:

Ընթացիկ հարցերում ֆակուլտետի մեթոդական խորհրդի նախագահ Ա. Սուրադյանը քննարկման ներկայացրեց ընդհանուր ֆիզիկայի և աստղաֆիզիկայի ամբիոնի ներկայացրած, դոցենտ Ռ.Յ. Գաբրիելյանի, պրոֆ. Դ.Ա. Բադալյանի և դոցենտ Յ.Գ. Բադալյանի "Սոլեկուլային ֆիզիկա" լաբորատոր աշխատանքների ձեռնարկ" աշխատանքը տպագրության ներկայացնելու երաշխավորության հարցը:

Որոշեցին - Երաշխավորել ձեռնարկը հրատարակության` հաշվի առնելով ֆակուլտետի մեթոդական խորհրդի դրական եզրակացությունը:

Ելույթ ունեցավ պրն Ա. Յովսեփյանը առաջարկելով ֆակուլտետում կազմել նախաձեռնող խումբ, որի նպատակը կլինի նպաստել գիտատական հետազոտությունների ներդրմանը, ստեղծել գիտական մշակումների կենտրոն: Պրն Յ. Կարայանը ավելացրեց, որ ստեղծված կենտրոնը կարող է դառնալ ուսանողական պրակտիկայի կենտրոն: Այս գաղափարի իրականացման ճանապարհին կազմակերպչական և ֆինանսական որոշ դժվարությունների մասին խոսեց պրն Սեդրակյանը:

Խորհուրդը հավանություն տվեց կենտրոնի ստեղծման գաղափարին և որոշեց հնարավորինս աջակցել կենտրոնի ստեղծման գործընթացին:

Իր ելույթում պրոֆեսոր Դ. Սեդրակյանը ներկայացրեց ֆակուլտետում թեմատիկ ֆինանսավորմամբ ծրագրերի քանակի խիստ նվազման հարցը: Նշեց, որ ԳԱԱ-ում

այդ թեմաների ֆինանսավորումը ուղղվել է բազային ֆինանսավորման լաբարատորիաներին, իսկ բուհերում այդ ֆինանսավորումը չի փոխանցվել: Վերջին հանգանմանքը խիստ դժվարացնում է գիտական աշխատանքի կազմակերպումը ամբիոններում:

Ելույթ ունեցավ նաև օպտիկայի ամբիոնի վարիչ Ռ. Հակոբյանը, խոսեց 1-ին կուրսի ասպիրանտների ուսումնական ծանրաբեռնվածության մասին կրեդիտային համակարգում: Նա նշեց, որ ասպիրանտների լսարանային դասաժամերը ամբիոնի ժամերի հաշվին են, ինչը դժվարեցնում է մասնագիտական առարկաների անհրաժեշտ ծավալի ապահովումը և որոշ խնդիրներ է առաջացնում դասախոսական ծանրաբեռնվածությունների կազմման հարցում:

Խորհուրդը ի գիտություն ընդունեց վերջին ելույթները:

Ֆիզիկայի ֆակուլտետի դեկան

Ռ. Մ. Ավագյան

Խորհրդի քարտուղար

Ի.Գ. Հարությունյան